ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ Ա. Համբարձումյան

«01» 09 2022 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արմավիրի մարզի

Գեղակերտի միջնակարգ դպրոց XI

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Մանուկյան Քրիստինե Վարազդատի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022 - 2023» ուսումնական տարի

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*(դասարանի ընդհանուր բնութագիրը)*

XI դասարանում սովորում են 15 աշակերտ՝ 8 տղա, 7 աղջիկ: Դասարանը ակտիվ և համախմբված է: Աշակերտները համերաշխ են: Նրանք օգնում են միմյանց ցանկացած հարցում: Այս ուստարում ունենք նոր տեղափոխված աշակերտ,ում ընդունեցին շատ ջերմ ,և նա շատ շուտ ընկերացավ:Դասարանը ակտիվորեն մասնակցում է համադպրոցական միջոցառումներին, հանրօգուտ աշխատանքներին և շաբաթօրյակներին: Միմյանց նկատմամբ շատ ջերմ են, ուշադիր, համախմբված:

*Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում*

2022-2023 ուստարվա ընթացքում դասարանի հետ տարվող աշխատանքների նպատակն է բարձրացնել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիրակության աստիճանը, նպաստել նրանց մտավոր կարողությունների, գիտելիքների, հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: Հասնել նրան, որ լինեն ավելի համերաշխ ու ընկերասեր: Ուստարվա ընթացքում անցկացնել զրույցներ, էքսկուրսիաներ, հանրօգուտ աշխատանքներ: Անհատական աշխատանքների միջոցով նպաստել ուսման մեջ թերացող աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Անցկացնել դասալսումներ, ծնողական ժողովներ: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի հետևում, համագործակցություն,փոխօգնություն) :

*Գեղագիտական դաստիարակություն*

Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացածության զգալի մասը: Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը:
Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ունակությունների, կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը, ակտիվացնում, ընդլայնում և բավարարում է գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները: Գեղագիտական դաստիարակությունը իրականացնում է երկու հիմնական գործառույթ. այն ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը և զարգացնում նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է. մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը: Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար:ելնելով վերոհիշյալից՝ աշակերտների մեջ ձևավորել գեղագիտություն և ճաշակ: Սովորեցնել նրանց գնահատել արվեստը: Այցելել պատկերասրահներ,մշակութային վայրեր, կազմակերպել հանդիպումներ, միջոցառումներ:

*Բարոյական դաստիարակություն*

Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիաներ դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Ճիշտ ուղղորդել, համբերատար լինել, վեր հանել ճիշտ և սխալ մտադրությունները, տանել զուգահեռներ մտածածի և գործածի միջև, նկատել վարքային շեղումները:

*Ֆիզիկական դաստիարակություն*

Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզդաստիարակությանը: Ներգրավել սպորտային խմբակներում, կազմակերպել սպորտային օլիմպիադաներ, մրցույթներ զուգահեռ դասարանների միջև: Զարգացնել շարժողական հմտություններն ու կարողությունները ճիշտ կիրառելու կանոններ: Ծանոթացնել առաջին օգնության կանոններին, հիգիենայի պահպանման հիմունքներին:

*Աշխատանքային դաստիարակություն*

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում: Մասնակցել դասարանական և դպրոցական միջոցառումներին/ հերթապահություն, շաբաթօրյակ, ծառատունկ ևն/:

*Էկոլոգիական դաստիարակություն*

Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում : Անդրադառնալ մարդկանց կողմից լավ կամ վնասակար սովորություններին, բացատրել շրջակա միջավայրի մաքրության կարևորագույն նշանակությունը:

*Ռազմահայրենասիրական դաստիարակություն*

Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում ի շահ հայրենիքի բարօրության : Այդ իսկ պատճառով հայրենասիրության զարգացման վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայինների և հերոսների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը: Այցելել Եռաբլուր, հանդիպել պատերազմին մասնակցած տղաների հետ, կազմակերպել հուշ-ցերեկույթներ:

*Դպրոց-ընտանիք կապը*

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց - ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն: Ծնողներին ներգրավել ուսումնադաստիարակչական գործընթացում:

# Դասղեկի ժամերի թեմատիկ պլանավորում

| Հ/հ | թեմա | նպատակը | ժամկետ |
|---|---|---|---|
| 1. | Նոր ուսումնական տարվա աշխատանքների քննարկում, դասագրքերի բաշխում: | Հաշվի առնել աշ. կարծիքներն ու նախասիրությունները | 2.09 |
| 2. | Իմ երկիրը երեկ, այսօր և վաղը:Ինչպես պայքարել անտարբերության դեմ, պահպանել անկախությունը: | Սիրել հայրենիքը , նպաստել բարգա-վաճմանը, ճանաչել իրավունքներն ու կատարել պարտականությունները | 9.09 |
| 3. | Անկախության գինն ու դերն ինձ համար: | Սիրել հայրենիքը, պաշտպանել թշնամուց | 16.09 |
| 4. | Պետություն, ազգ, լեզու և ազգային ինքնություն՝ մենթալիտետ: | արժևորել ազգայինը | 23.09 |
| 5. | << Լսելու կարողություն>> | կարողանալ լսել դիմացինին | 30.09 |
| 6. | Ինչպես հաղթահարել վնասակար սովորույթները: | ձևավորել վնասակար սովորույթները հաղթահարելուն միտված կարողություններ | 7.10 |
| 7. | <<Ինչպե՞ս հաղթահարել ծուլությունը >> թեմայով բաց քննարկում և վերլուծություն: | հաղթահարել վատ սովորությունները | 14.10 |
| 8. | Ոսկերիր աշուն | ձևավորել մշակութային ճաշակ | 21.10 |
| 9. | Ինչպե՞ս զգուշանալ խաբեությունից> | զարգացնել զգուշավորություն և զգոնություն | 4.11 |
| 10. | Ճակատագիր թե նախախնամություն | կիմանա եկեղեցու դիրքորոշումը, կխուսափի կախարդություններից | 11.11 |
| 11. | Ո՞վ է անհատը: | դատողություններ անել անհատ հասարա-կություն իդեալական հարաբերության մասին: | 18.11 |
| 12. | Ազատ անհատը, ազատ հասարակությունը: | անհատի ազատությունը համադրել մյուս անհատների ազատության հետ ու հասկանալ, որ հնարավոր չէ լինել բացարձակ ազատ: | 25.11 |
| 13. | Մասնագիտական կողմնորոշում: | ինչպես ընտրել մասնագիտություն: | 2.12 |
| 14. | Գենդերային դերեր: Դիրքի կամ կարգավիճակի ձգտելով: | հասկանալ աղջիկների դիրքը ժամանակակից հասարակության մեջ | 9.12 |
| 15. | Մարդը և շրջակա միջավայրի պահպանությունը: | կարևորել շրջակա միջավայրի պահպանությունը: | 16.12 |
| 16. | Ի՞նչ է պատասխանատվությունը : | բացատրել պատասխանատվության ծագումն ու հասկացությունները : | 23.12 |
| 17. | Սերունդների անխուսափելի բախումները և դրանց հանգուցալուծումները | հասկանալ բախումների պատճառները և գտնել լուծումները | 13.01 |
| 18. | Հանճարները սիրո մասին | արժեհամակարգի ձևավորում | 20.01 |
| 19. | Քչերը գիտեն, շատերը չգիտեն/տեսանկյուններ/ | կնպաստի ինքնազարգացմանը | 27.01 |
| 20. | Կռվել թե բանակցել: | զարգացնել բանակցելու հմտությունները | 3.02 |
| 21. | Բոլորն ունեն հավասար իրավունքներ : | մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերի պահանջների քննարկում : | 10.02 |
| 22. | Ես և ճնշող մեծամասնությունը: | ձևավորել անարդարության հանդեպ անհանդուրժողական, անզիջում վերաբերմունք: | 17.2 |

| | | | |
|---|---|---|---|
| 23. | Ուժի չարաշահում: | վերհանել բռնության, հալածանքի դրդապատճառները: | 24.02 |
| 24. | Հայոց եկեղեցու տոները: | բացատրել պետական և եկեղեցական տոների նպատակը, իմաստն ու նշանակությունը : | 3.03 |
| 25. | Բարոյական արժեքներ՝ պատասխանատվություն և ապրումակցում: | աշակերտների մեջ կձևավորի արդարության հանդեպ անհանդուրժելիի անզիջում վերաբերմունք : | 10.03 |
| 26. | Մեծ եղեռն | կձևավորի արդարության հանդեպ անզիջում վերաբերմունք | 17.03 |
| 27. | Ներդաշնակություն: | վերհանել ներդաշնակության կարևորությունը հասարակության կայուն զարգացման համար : | 24.03 |
| 28. | Հետազոտում ենք մեդիան : | վերլուծել մեդիա պրոդուկտը որպես մեդիա սպառողներ : | 7.04 |
| 29. | Անսահմանափակ իշխանություն : | ներկայացնել անսահմանափակ իշխանության դրսևորումները և գնահատել դրանք : | 14.04 |
| 30. | Միասնականությունը բազմազանության մեջ : | քննարկել նույնականության և տարբերության իմաստները և դրանց միջև հավասարակշռության կարևորությունը : | 21.04 |
| 31. | Օրենք թե՞ սովորույթ: | դրսևորել համագործակցելու և բանավիճելու հմտություններ | 28.04 |
| 32. | Մայրս պատկերն է մայր հայրենիքի: | աշակերտները ունենան մայրության նկատմամբ պաշտամունքի հասնող վերաբերմունք: | 5.05 |
| 33. | Ակտիվ քաղաքացին և նրա մասնակցությունը: | բնութագրել ակտիվ քաղաքացուն և բացատրել, թե ինչ է նշանակում լինել ակտիվ քաղաքացի: | 12.05 |
| 34. | Մեծ եղեռնը և հայոց եկեղեցին: | ամրապնդել գիտելիքները Հայոց ցեղասպանության և Հայ Առաքելական եկեղեցու վերաբերյալ: | 19.05<br>26 |